ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

9 դեկտեմբերի 2011 թվականի **թիվ 880** քաղ. Մոսկվա

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11–ի թիվ 129 որոշման խմբագրությամբ (2013 թվականի հունիսի 25-ի խմբագրություն))

«Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշեց**.

1. Ընդունել «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 021/2011) (կցվում է):

2. Հաստատել՝

2.1. այն ստանդարտների ցանկը, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջների պահպանումը (կցվում է).

2.2. այն ստանդարտների ցանկը, որոնք պարունակում են «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջները կիրառելու եւ կատարելու եւ արտադրանքի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (կցվում է):

3. Սահմանել՝

3.1. «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից՝ բացառությամբ կաթին եւ կաթնամթերքին, մսին եւ մսամթերքին, ձկանը եւ ձկնամթերքին ու դրանց արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման հետ կապված պրոցեսներին ներկայացվող պահանջների: Մինչեւ կաթին եւ կաթնամթերքին, մսին եւ մսամթերքին, ձկանը եւ ձկնամթերքին ու դրանց արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման հետ կապված պրոցեսներին, այդ արտադրանքի եւ դրա արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման պրոցեսների առնչությամբ ներկայացվող պահանջները սահմանող՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու օրը՝ գործում են Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերի կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրության դրույթները.

(3.1. ենթակետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11–ի թիվ 129 որոշման խմբագրությամբ (2013 թվականի հունիսի 25-ի խմբագրություն))

3.2. Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ

հանդիսացող արտադրանքի առնչությամբ (այսուհետ՝ արտադրանք), մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մտնելու օրը, վավեր են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց ոչ ուշ, քան 2015 թվականի փետրվարի 15-ը: Նշված փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրը, վավերական են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը:

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի տրամադրումը կամ ընդունումը չի թույլատրվում.

3.3. մինչեւ 2015 թվականի փետրվարի 15-ը թույլատրվում են արտադրանքի արտադրությունը եւ շրջանառության մեջ դնելը՝ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան՝ նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը:

Նշված արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում՝ շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը կամ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 386 որոշմանը համապատասխան:

Այդ արտադրանքի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով չի թույլատրվում.

3.3.1. մինչեւ 2014 թվականի հուլիսի 1-ը թույլատրվում են այն արտադրանքի արտադրությունը եւ Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության

մեջ դնելը, որը մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը ենթակա չի եղել Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության պարտադիր գնահատմանը (հավաստմանը)՝ առանց համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի եւ առանց համապատասխանության ազգային նշանով (շուկայում՝ շրջանառության նշանով) մակնշման.

(3.3.1. ենթակետն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11–ի թիվ 129 որոշմամբ)

3.4. սույն Որոշման 3.2 ենթակետում նշված համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի գործողության ժամկետի ընթացքում շրջանառության մեջ դրված արտադրանքի, ինչպես նաեւ սույն Որոշման 3.3.1 ենթակետում նշված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված պիտանիության ժամկետի ընթացքում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11–ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

3.5. Տեխնիկական կանոնակարգի 24-րդ հոդվածով նախատեսված կարգով մինչեւ 2015 թվականի փետրվարի 15-ը պետական գրանցման ենթակա է հետեւյալ արտադրանքը՝

1) սեղանի բնական հանքային ջուր.

2) տարաների մեջ շշալցված խմելու ջուր.

3) տոնուսը բարձրացնող խմիչքներ.

4) սննդային հավելումներ, համալիր սննդային հավելումներ, բուրավետիչներ, բուսական լուծամզուքներ՝ որպես համահոտային նյութեր եւ հումքային բաղադրիչներ, միկրոօրգանիզմների մեկնարկային կուլտուրաներ եւ բակտերիալ մերաններ, տեխնոլոգիական օժանդակ միջոցներ, այդ թվում՝ ֆերմենտային պատրաստուկներ.

5) գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված (տրանսգենային) օրգանիզմների օգտագործմամբ ստացված սննդամթերք, այդ թվում՝ գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմներ.

3.6. արտադրական այն օբյեկտների մասին տեղեկությունները, որոնք նախկինում սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործունեություն են իրականացրել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, մուտք են արվում պետական ռեեստր առանց Տեխնիկական կանոնակարգին համապատասխան արտադրական օբյեկտների պետական գրանցման ընթացակարգերն անցկացնելու.

3.7. Տեխնիկական կանոնակարգի 29-րդ հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրացված տեղեկատվական համակարգը գործողության մեջ դնելու պահից.

3.8. «Սննդամթերքի առանձին տեսակների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու օրվանից, Տեխնիկական կանոնակարգում փոփոխություններ կատարելու միջոցով, սննդամթերքի տեսակների անվանումները ենթակա են ճշգրտման՝ այդ տեխնիկական կանոնակարգերով սահմանված սահմանումներին համապատասխան եւ ենթակա են բացառման այդ Տեխնիկական կանոնակարգերի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի անվտանգությանը ներկայացվող պահանջները (բացի ախտածին (պաթոգեն) միկրոօրգանիզմների եւ դրանց տոքսինների, միկոտոքսինների, տոքսիկ տարրերի, նիտրատների, համաշխարհային նշանակության թունաքիմիկատների (պեստիցիդների)

քանակին, ինչպես նաեւ ռադիոնուկլիդների թույլատրելի մակարդակին ներկայացվող պահանջներից) եւ անվտանգության միկրոկենսաբանական նորմատիվները (պայմանական ախտածին (պաթոգեն) միկրոօրգանիզմները):

4. Հանձնաժողովի քարտուղարությանը՝ Կողմերի հետ համատեղ՝

4.1. մինչեւ «Սննդամթերքի առանձին տեսակների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու օրը Տեխնիկական կանոնակարգում ապահովել փոփոխությունների կատարումը՝ սույն Որոշման 3.8 ենթակետին համապատասխան.

4.2. նախապատրաստել Տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծը, եւ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից եռամսյա ժամկետում ապահովել դրա՝ սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը՝ նախատեսելով՝

4.2.1. «Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենայի միասնական պահանջներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որոնք հաստատվել են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքին ներկայացվող պահանջները դրանցից բացառելու մասով.

4.2.2. «Մաքսային միության շրջանակներում համապատասխանության պարտադիր գնահատմանը (հավաստմանը) ենթակա արտադրանքի միասնական ցանկում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը՝ միասնական փաստաթղթեր տրամադրելու հետ մեկտեղ, որը հաստատվել է Մաքսային միության

հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 620 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքը դրանից բացառելու մասով.

4.2.3. «Մաքսային միության մաքսային սահմանին եւ մաքսային տարածքում սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքների միասնական ցանկում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքը դրանից բացառելու մասով.

4.2.4. Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը վերաձեւակերպելու ընթացակարգերում փոփոխությունների նախագիծը նախապատրաստելը եւ սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը՝ Տեխնիկական կանոնակարգի պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ցուցանիշները եւ (կամ) դրանց թույլատրելի մակարդակները չեն համընկնում Տեխնիկական կանոնակարգում նշված ցուցանիշներին եւ (կամ) դրանց թույլատրելի մակարդակներին.

4.2.5. միջպետական այն ստանդարտների մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման) եւ ներդրման մասին ծրագրի նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով

Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Տեխնիկական կանոնակարգի պահանջների, ինչպես նաեւ միջպետական այն ստանդարտների պահպանումը, որոնք պարունակում են Տեխնիկական կանոնակարգը կիրառելու եւ կատարելու եւ արտադրանքի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ.

4.2.6. «Անասնաբուժական հսկողությանը (վերահսկողությանը) ենթակա ապրանքների միասնական ցանկում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 18-ի թիվ 317 որոշմամբ՝ դրանից այն արտադրանքը բացառելու մասով, որը Տեխնիկական կանոնակարգի համաձայն՝ առնչվում է կենդանական ծագման վերամշակված սննդամթերքին.

4.2.7. ««Օբյեկտների համատեղ ստուգումների անցկացման եւ անասնաբուժական հսկողությանը (վերահսկողությանը) ենթակա ապրանքների (արտադրանքի) փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին» Հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 834 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի դրույթներին համապատասխանություն ապահովելու մասով.

4.2.8. «Կենդանական ծագման չվերամշակված պարենային հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն իրականացնող արտադրական օբյեկտների գրանցման ժամանակ ստուգումներ անցկացնելու չափորոշիչները սահմանելու մասին» Հիմնադրույթի նախագիծը

նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը:

5. Ռուսական կողմին՝ Կողմերի մասնակցությամբ ստանդարտների կիրառման արդյունքների մոնիթորինգի հիման վրա ապահովել սույն Որոշման 2-րդ կետում նշված ստանդարտների ցանկերի թարմացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը եւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից՝ տարին մեկ անգամից ոչ պակաս, դրանք՝ սահմանված կարգով ներկայացնել Հանձնաժողովի քարտուղարություն՝ հաստատման համար:

6. Կողմերին՝

6.1. մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ն ապահովել Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի առնչությամբ իրենց պետությունների նորմատիվ իրավական ակտերը չկիրառելու մասին համապատասխան որոշման ընդունումը.

6.2. մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ն ապահովել հավաստագրման մարմինների, համապատասխանության գնահատման (հավաստման) աշխատանքներ իրականացնող փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) պատրաստվածությունը՝ Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության մասին հայտարարագրերի գրանցման գործընթացին.

6.3. մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը՝ սահմանել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար պատասխանատու պետական հսկողության (վերահսկողության) մարմիններին, եւ դրա մասին տեղեկացնել Հանձնաժողովին.

6.4. Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ապահովել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական

հսկողության (վերահսկողության) իրականացումը՝ հաշվի առնելով սույն Որոշման 3.2-3.4 ենթակետերը:

7. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետության կողմից	**Ղազախստանի Հանրապետության կողմից**	**Ռուսաստանի Դաշնության կողմից**
(Ստորագրություն)	(Ստորագրություն)	(Ստորագրություն)
Ս. Ռումաս	**ՈՒ. Շուկեեւ**	**Ի. Շուվալով**